ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)



Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտաշխատող, պատմաբան

Լրացավ անվանի հնագետ, պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, բազմավաստակ մանկավարժ, Գավառի պետական համալսրանի պրոֆեսոր Վարշամ Վահանի Ավետյանի ծննդյան 90-ամյակը: Գիտամանկավարժական գործունեության վեց տասնամյակի ընթացքում նա ստեղծել և թողել է արժեքավոր հնագիտական և հայրենագիտական ժառանգություն, 9 մենագրություն, այդ թվում՝ 5 բուհական ձեռնարկ, 70-ից ավելի գիտական, շուրջ չորս տասնյակ մեթոդական և հրապարակախոսական հոդվածներ: Նրա կյանքի տարեգրությունը արգասաբեր և շնորհաշատ մտավորականի, պատմաբան-հնագետի կենսագրություն է:

Վ. Ավետյանը հնագիտական պեղումներ և ուսումնասիրություններ է կատարել Սևանում, Լոռիում, Արարատյան դաշտում և Սյունիքում՝ հմտորեն կարողանալով դասախոս-մանկավարժի շնորհալի աշխատանքը համատեղել գիտահետազոտական և հասարակական գործունեության հետ: Անմնացորդ սիրով և նվիրումով կապված էր ոչ միայն իր ծննդավայր Լոռուն, այլև Սևանի ավազանին, որի հնագիտության, պատմության և հայրենագիտության ուսումնասիրմանը անսպառ եռանդով և կարողություններով նվիրվեց երիտասարդ տարիքից:

Բազմավաստակ հնագետը ծնվել է 1927թ. փետրվարի 3-ին Լոռու մարզի Շնող գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Թումանյանի շրջանի Թեղուտ գյուղի, ապա իր ծննդավայր Շնողի դպրոցներում:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին, դպրոցական ուսմանը զուգահեռ, Վ. Ավետյանը թիկունքի աշխատող էր Ալավերդու պղնձաձուլական գործարանում: 1943թ. ավարտում է Ալավերդու Միքայել Նալբանդյանի անվան բաներիտ միջնակարգ դպրոցը, իսկ 1944թ. մեկնում Երևան ուսանելու: Ուսուցիչները խորհուրդ են տալիս կրթությունը շարունակել տեխնիկական բուհում, քանզի երազանքն էր օդաչու դառնալ (չնայած որ դեռ պատանի տարիքից սիրել է մանկավարժի աշխատանքը): Նրանց խորհրդով ընդունվում է պոլիտեխնիկական ինստիտուտ, որը չի ավարտում: Փնտրտուքների մեջ, 1948-50թթ. ուսումնառությունը շարունակում է Երևանի ֆինտնտնեսագիտական տեխնիկումում, ավարտելուց հետո որպես գրագիր ծառայում խորհրդային բանակում:

1953թ. ընդունվում և գերազանցությամբ ավարտում է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը՝ աշակերտելով հայագիտության և հայ պատմագրության բազմերախտ մեծերին՝ Մորուս Հասրաթյանին, Արարատ Ղարիբյանին, Համո Հարությունյանին, Վահան Իսկանյանին, Վարդգես Համազասպյանին, Աշոտ Աբրահամյանին, Առաքել Առաքելյանին, Արշալույս Բաբայանին և այլոց: Նա այն բախտավոր ուսանողներից էր, որոնք արժանացան իրենց առատաբաշխ ուսուցիչների խրախուսանքին ու բարեկամությանը, ապա դարձան այդ մեծերին նոր սերնդի հետ կապող, նրանց հին ու ազնիվ ավանդները նոր եկողներին փոխանցող այն կամուրջը, որը չունի ո'չ հնանալ, ո'չ փլուզում:

Ուսանողական շրջանում նրան նկատում է ինստիտուտի գիտական գծով պրոռեկտոր, պատմաբան-հնագետ, բանասեր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Ս. Հասրաթյանը, որը հետագայում դառնում է նրա գիտական ղեկավարը: Մ. Հասրաթյանն անձնական օրինակով գիտության և մանկավարժության հանդեպ նվիրվածություն է ներարկում իր սանի մեջ: Նրա բարի կամքով Վ. Ավետյանը հնագիտական պրակտիկան յուրացնում է անվանի հնագետ, Լճաշենի արշավախմբի ղեկավար Հարություն Մնացականյանից, ում ապագայում փոխարինում է: Գիտության այս երկու հսկաների ուշադրության, ջերմ բարեկամության և հետևողական աշխատանքի մթնոլորտում Վ. Ավետյանը սկսում է գիտական առաջին լուրջ ուսումնասիրությունները, ողջ կյանքում կարևոր և բազմախորհուրդ հպարտանքի նման պահելով նրանց հանդեպ ունեցած ակնածանքն ու հուշնշխարները: Հետևելով սիրելի ուսուցիչների օրինակին՝ սիրում է այն գործը, որի նվիրյալներից մեկն է դառնում՝ պահելով մարդկային իր տեսակն ու սկզբունքայնությունը, չդավաճանելով այն արժեքներին, որոնց դավանել է ողջ կյանքում: Ամենուր գործել է իրեն հատուկ բարեխղճությամբ ու եռանդով, արժանանալով ոչ միայն գիտական հասարակայնության, այլև իր սաների,

ընկերների ու բարեկամների գնահատանքին, վայելել նրանց սերն ու ակնածանքը:

Ովքեր աշակերտել են Վ. Ավետյանին, մի անանց հիացումով ու երախտագիտությամբ են հիշում նրա տված դասերը՝ գիտական, թե բարոյական, քաղաքացիական ազնվամտության, թե հայրենասիրության: Ովքեր երբևէ ունկնդիր են եղել նրա դասախոսություններին, զրույցներին, չեն կարող մոռանալ նրա խորիմաստ խոսքն ու խրատը, որն արվում էր ինքնահատուկ վարպետությամբ: Այդ շնորհը գալիս էր գիտական խորագնա պրպտումներից, որ թաթախված էին ազնիվ ու վեհ զգացմունքներով: Նա քաջատեղյակ էր ոչ միայն հայ հնագիտությանը, այլև ընդհանուր, ինչպես և պատմությանը, ազգագրությանը, մշակույթի և գրականության անհուն-անեզերք աշխարհին, որոնց բոլոր մանրամասները գիտեր խոսեցնել, հյուսել իրար, կատարել եզրահանգումներ, որոնք իրենն էին, բայց դառնում էին հանրությանը ու հաստատվում գիտական պրպտումներով:

1958թ. ավարտելով ինստիտուտը՝ որպես դպրոցի տնօրեն՝ աշխատանքի է նշանակվում Սևանի շրջանի Լճաշեն գյուղում (ներկայումս ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ աշխատելով մինչև 1963թ.: Տնօրինության հինգ տարիների ընթացքում Լճաշենի դպրոցը դառնում է ամենաառաջատարը և կարգապահը շրջանում: Այդ ժամանակ է, որ բարձր դասարանի աշակերտները հնարավորություն են ստանում բաց դասեր ունենալ և հնագետ Հ. Մնացականյանի ու Վ. Ավետյանի նախաձեռնությամբ մասնակցել ոչ միայն Լճաշենի հնագիտական պեղումներին, այլև լսել հնավայրում անցկացվող դասախոսությունները[1]:

1963-64թթ. վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ Սևանի շրջանի կուսշրջկոմում, եղել «Գիտելիք» ընկերության նախագահը: 1964-68թթ. աշխատել է Սևանի գյուղական արտադրական վարչության՝ Սևանի, Կամոյի (Գավառ) և Հրազդանի միացյալ ժողկրթբաժնի վարիչ, այնուհետև Սևանի շրջխորհրդի գործկոմի, ապա քաղխորհրդի գործկոմի ժողկրթբաժվար: 1960-67թթ. ընտրվել է Սևանի խորհրդի գործկոմի, իսկ 1967-72թթ.՝ քաղխորհրդի գործկոմի պատգամավոր:

1959-72թթ. Հ. Մնացականյանի լճաշենյան արշավախմբի կազմում մասնակցում է հնագիտական պեղումներին, սկզբում որպես գիտաշխատող, այնուհետև արշավախմբի պետի տեղակալ:

1968-2008թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ դասավանդելով հայ հնագիտություն, հնագիտության հիմունքներ և պատմական

---

[1] Ավետյան Վ. Վ., Սովորողներն ուսումնասիրում են մեր երկրի պատմական անցյալը. «Սևան» շաբաթաթերթ, 1959, թիվ 86, էջ 3:

հայրենագիտություն առարկաները: 1968-72թթ. եղել է ինստիտուտի նախապատրաստական դասընթացների վարիչ: Շուրջ 15 տարի դասավանդել է Գավառի պետական համալսարանում՝ իր մտերիմ ընկերոջ՝ համալսարանի հիմնադիր-ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Հակոբյանի հիմնած կրթօջախում:

1970թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ «Սևանի ավազանի ուշ բրոնզեդարյան տնտեսության հիմնական ձևերը» հնագիտական թեմայով[1] (ղեկավար՝ Մ. Ս. Հասրաթյան, ընդդիմախոս-հնագետներ՝ Հ. Հ. Մնացականյան, Հ. Ա. Մարտիրոսյան): Լճաշենից հայտնաբերված պեղածոների և Սևանի ավազանում կատարված հնագիտական ուսումնասիրությունների հենքի վրա գրված այս աշխատանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Թեմային վերաբերելու առումով ուշագրավ են հնագետի մի շարք գիտական հրապարակումները, որոնք գրվել են պրակտիկ, գիտահետազոտական աշխատանքների հիման վրա (Սևանում[2], Լճաշենում[3], Մեծեփում[4], Ծովագյուղում[5], Արզնիում[6] կատարած պեղումների արդյունքում):

Սևանի ավազանում Վ. Ավետյանը ուսումնասիրություններ է կատարել նաև Յայջիի (Զովաբեր), Դդմաշենի, Վարսերի դամբարանադաշտերում, հայտնաբերել է Մարտունու տարածաշրջանի Թմբուկ այրի կոչվող (նախկինում՝ Նաղարա խանա) դամբարանադաշտը, այն շրջափակող

---

[1] Аветян В.В., Основные формы хозяйства в эпоху поздней бронзы в Севанском бассейне /по материалам Лчашена/, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Е., 1970.

[2] Ավետյան Վ.Վ., Սևանի ավազանի ուշ բրոնզեդարյան տնտեսության պատմությունից.- Հայաստանի ժողովրդական տնտեսություն, հանդես, Ե., 1969, №4, էջ 72-77; **Նույնի,** Բրոնզեդարյան երկրագործության պատմությունից, Խ. Աբովյանի անվան հայկ. պետ. մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու (այսուհետև՝ ՀՊՄԻ), Ե., 1971, №4, էջ 253-258; **Նույնի,** Հայաստանի բնության պատմությունից.- Հայաստանի բնություն, հանդես, Ե., 1969, №11, էջ 25-26:

[3] Նույնի, Լճաշենի կիկլոպյան ամրոցը, «Սովետական մանկավարժ», ամսագիր, Ե., 1967, №6, էջ 44-48:

[4] Նույնի, Մեծեփի կիկլոպյան ամրոցը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1967, №2, էջ 227-230:

[5] Նույնի**,** Բրոնզեդարյան իրեր Ծովագյուղից, «Սովետական մանկավարժ», Ե., 1966, №6, էջ 28-33; *Տե՛ս նաև՝* Ավետյան Վ.Վ., Բրոնզեդարյան իրեր Ծովագյուղից.- «Սևան» շաբաթաթերթ, 1966, թիվ 41-42, էջ 4:

[6] Նույնի, Նոր հուշարձաններ Արզնի ձորում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1967, №2, էջ 231-238:

պարիսպները, նույն վայրում գտնվող վիշապաքարեր և մոնումենտալ քանդակագործության նմուշներ (աղավնակերպ և մարդակերպ): Հայտնաբերել է Լճաշենի դամբարանադաշտի չորրորդ տեղամասը[1]:

Հ. Մնացականյանի հետ Չկալովկա, Շորժա և Արդանիշ բնակավայրերի մոտ, լճափնյա ժայռերին, հայտնաբերել են փորագրած և լճի մակարդակի տատանումներին վերաբերող կարևոր նշումներ, որի մասին գիտական շրջանակներում առաջին հրապարակումները կատարվել է նրանց կողմից: 1966թ. ամռանը Հ. Մնացականյանն ու Վ. Ավետյանը Սևանի ավազանի պատմական հուշարձանների ուսումնասիրման նպատակով լճի շուրջ իրականացնում են ճանապարհորդություն, անցնելով ավելի քան 300 կմ[2]:

Գիտական և գրական-գեղարվեստական հանդեսներում, մամուլում տեղ գտած նրա հոդվածների և հրապարակումների մեծ մասը Սևանի ավազանում կատարած հնագիտական և հայրենագիտական ուսումնասիրությունների մասին է, մյուս հատվածն առնչվում է Լոռիում, Վանաշենում (Արարատի մարզ) և Վահանավանքում (Սյունիքի մարզ) կատարած ուսումնասիրություններին և պեղումներին:

1976թ. Վ. Ավետյանի հեղինակությամբ լույս է տեսնում «Հայրենագիտական աշխատանքները դպրոցում» գիրքը, որը ձեռնարկ է մասնագետ պատմաբան-ուսուցիչների համար, իսկ 1983թ.՝ «Գործնական աշխատանքներ հնագիտությունից» գիտամեթոդական ձեռնարկը: Այս աշխատություններում հնագետը տարիների հնագիտական պրակտիկ փորձով՝ սկսնակ մասնագետներին, մասնավորապես պատմաբան-ուսանողներին, առաջարկում է հետազոտության, պեղումների ժամանակ կիրառվող ձևերն ու մեթոդները, հայտնաբերված նյութի գիտական մշակման և թանգարանների ցուցադրությունների ծրագրեր կազմելու սկզբունքները, էքսկուրսիոն աշխատանքներ կատարելու հմտությունները, հայրենագիտական, դպրոցական և բուհական թանգարանների ստեղծման նպատակն ու կարևորությունը, ինչպես նաև քննարկում դրանց առնչվող այլ հարցեր:

Պակաս կարևորություն չեն ներկայացնում նաև Վ. Ավետյանի՝ «Արխիվագիտության հիմունքներ» (Ե., 1988) և «Դպրոցական թանգարանների կազմակերպումը» (Ե., 1988) ձեռնարկները:

---

[1] Ավետյան Վ.Վ.,Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Ե., 2003, էջ 17:

[2] Նույնի, Սևանա լիճն օղակող պատմական հուշարձանները (հնագետի ծոցատետրից), «Սևան» շաբաթաթերթ, 1966, թիվ 142, էջ 5; թիվ 143, էջ 5:

Գիտական մեծ արժեք է ներկայացնում պրոֆեսոր Վ. Ավետյանի «Շնող» գիրքը[1]: Այն գիտնականի ծննդավայրի ժողովրդական մշակույթն ու պատմությունն ամբողջացնող, ազգագրական և բանահյուսական նյութերով առլեցուն, ստվարածավալ աշխատություն է, որը ստեղծելու համար, հաղթահարելով շատ դժվարություններ և խոչընդոտներ, հեղինակն աշխատել է տասնամյակներ շարունակ: Տարիների ընթացքում նա զրույցներ է ունեցել գյուղի բանիմաց մեծահասակների հետ, հանդիպել տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, հնարավորության սահմաններում ուսումնասիրել Լոռվա իր հայրենի բնաշխարհը, կենցաղն ու սովորությունները, գրի առել լսած պատմությունները, փաստելով, որ ուսումնասիրվող տարածքի համար ամենամեծ հարստությունը նաև ուսումնասիրվող տարածքի մարդիկ են:

Սկսած 1960-ական թթ. վերջից՝ Շնողի և նրա տարածքի պատմական հուշարձանների ամբողջական հաշվառումն ու ուսումնասիրումը կատարել է Վ. Ավետյանը[2], որն ամփոփված է վերոնշյալ աշխատության մեջ: Դրանք ուսումնասիրելուց զատ, հնագիտական պեղումներ է կատարել գյուղի հան-դամասերում գտնվող հնավայրերում՝ Դուքանաձորում, Ձորիգյուղում, Մեծ Ուրթատեղում, Ղարաքոթուկում, Բովերում[3]: Առաջիններից մեկն էր, որ ուսումնասիրություններ կատարեց Թեղուտում (Փիջուտում)[4]: 1983թ. ուսումնասիրություններ է կատարել Կակալի ձորում (Ալավերդուց 15 կմ հարավ-արևելք, Հաղպատ-Ծաղկաշատ հատվածում)[5]:

Վ. Ավետյանի վաստակն ակնառու է Շնողի տարածքում գտնվող Կայծոն (Ամանակ)[6], Վահանաբերդ (Նիկոլի Ուրթատեղի մոտ)[7] և Կոզման[8] կիկլոպյան ամրոցների ուսումնասիրություններում:

---

[1] Նույնի, Շնող, Ե., 1998:

[2] Ավետյան Վ.Վ., նշվ. աշխ., էջ 8:

[3] Նշվ աշխ., էջ 45-76; Նույնի, Հին դամբարաններ Շնողի տարածքում, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ ԼՀԳ), Ե., 1974, №12, էջ 80-88; Նույնի, Շնողը պետք է դառնա հնագիտական ուսումնասիրությունների առարկա, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1972, №5, էջ 113-134:

[4] Ավետյան Վ.Վ., Շնող, էջ 50:

[5] Նույնի, Կակալի ձորից հայտնաբերված իրեր, ԼՀԳ, Ե., 1984, №7, էջ 87-88; Նույնի, Կակալի Ձորի գտածոները, «Լոռի», շրջանային թերթ, 1983, 8 փետրվ., էջ 4:

[6] Նույնի, Շնող, էջ 61-62, էջ 76-83:

[7] Նշվ. աշխ., էջ 62-63; Նույնի, Կիկլոպյան ամրոցներ Շնողի տարածքում, ԼՀԳ, 1979, №6, էջ 112-113:

[8] Ավետյան Վ.Վ., Շնող, էջ 63-64; Նույնի, Կիկլոպյան ամրոցներ Շնողի տարածքում, էջ 114:

1979թ. Վ. Ավետյանը հայտնաբերել է Լորուտի հնագիտական հուշահամալիրը՝ ոչ միայն բրոնզի, այլև վաղ երկաթի և միջնադարին բնորոշ մի շարք հուշարձաններով: Դրանց նախնական ուսումնասիրություններին և պեղումների արդյունքներին նվիրված հաղորդումներ ու լրատվություն է տրվել գիտական մամուլում[1]: Հնավայրում կատարած նախնական ուսումնասիրությունները հնագետն ամփոփել է իր վերջին՝ «Լորուտի հին և հնագույն մշակույթը» (Ե., 2012թ.) գրքում:

Կար նաև մի բնագավառ՝ աբովյանագիտությունը, որին նվիրվել է 1947 թվականից: Այդ ժամանակից ի վեր Վ. Ավետյանը զբաղվել է Խ. Աբովյանի անհետացման առեղծվածով[2]: Իր երկարամյա հետազոտությունների և գիտական հրապարակումների արդյունքում 2002թ. լույս է տեսնում «Խաչատուր Աբովյանի չարանենգ սպանությունը» աշխատությունը: Հիմնարար ուսումնասիրություններից հետո մատնանշվում է այն վայրը, ուր, ըստ հնագետի, թաղված պետք է լիներ Խ. Աբովյանը: Այս հարցին առնչվող գիտական հետազոտությունների և վերլուծությունների արդյունքների մասին բազմիցս հրապարակվել են Հայաստանի և Սփյուռքի մամուլում, լույս են տեսել տասնյակ հոդվածներ: Վերլուծական անվիճելի կարողությունները, արխիվային հարուստ նյութերի իմացությունը, աղբյուրագիտական խոր գիտելիքները, դատողությունները, նրա համար ապահովել են հետաքրքրություններ լայն շրջանակ նաև այս հարցում, որի արդյունքում Վ. Ավետյանին հաջողվել է շարադրել վերոնշյալ բարդ ու հակասական հարցը, կատարել իր բացահայտումներն ու տալ դրանց բացատրությունը:

Հնագիտության բնագավառում նա թողեց գիտական մեծ արժեք ներկայացնող «Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում»[3] մեծածավալ և մնայուն մենագրությունը, որը նվիրված է Սևանի ավազանի, մասնավորապես Լճաշենի հնագիտական նյութերի

---

[1] Նույնի, Հին հուշարձաններ Լորուտի տարածքում, ԼՀԳ, 1981, №8, էջ 113-116; Նույնի, Լոռիում հայտնաբերված բրոնզե գոտիներ, ԼՀԳ, 1981, №4, էջ 314-317 (համահեղինակ՝ Եսայան Ս.Ա.); Լորուտի բրոնզե գոտու նախշազարդերը, ԼՀԳ, 1984, №5, էջ 72-77

[2] Ավետյան Վ.Վ., Խ. Աբովյանի անհետացման առեղծվածի շուրջը, «Մանկավարժ», ՀՊՄԻ պաշտոնաթերթ, 1988թ., №19-20, 30 սեպտ., էջ 2-5: Նույնի, Աբովյանի անհայտացման առեղծվածի շուրջը, «Գրական թերթ», Ե., 1988թ., սեպտ. 9, թիվ 37, էջ 4-5: Անհայտ բացակայություն, Խ. Աբովյանի անհայտ բացակայությունը (ժողովածու), Ե., 2009, էջ 165-167: Աբովյանի անհետացումը, «Գարուն», ամսագիր, Ե., 2002, թիվ 8, էջ 78-85: Աբովյանի ծննդյան թվականի հարցը, «Գարուն», Ե., 2002, թիվ 5-6, էջ 60-67: Աբովյանի ծննդյան թվականի հարցի շուրջ, Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) գիտական հոդվածների ժողովածու, Գավառ , 2003, թիվ 6, էջ 50-55:

[3] Ավետյան Վ.Վ., Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Ե., 2003:

ուսումնասիրությանը: Նրա աշխատության հենքը դրված է հիմնավորապես Հ. Մնացականյանի կողմից պեղված նյութերի ուսումնասիրման վրա (մասամբ նաև իր գտածոների)՝ բազմակողմանիորեն անդրադառնալով մշակույթի առանձին բնագավառների, օրինաչափություններին ու առանձնահատկություններին:

Բազմաթիվ են Վ. Ավետյանի հրապարակումները՝ Սևանի, մասնավորապես Լճաշենի հնագույն մշակույթին, ոսկերչությանն ու փայտարվեստին[1], երկրագործությանն ու տնտեսությանը[2] վերաբերող, որոնք տեղ են գտել գիտական հանդեսներում:

Իր ուսումնասիրություններում պատշաճ տեղ է հատկացրել նաև Գոշ (Տավուշի մարզ) և Նեղուց (Լոռու մարզ) գյուղերի տարածքներում իր կողմից հայտնաբերված ժայռապատկերների[3], Տաթև գյուղի մերձակայքում (Քրիանուց կոչվող վայրում) պատահականորեն գտնված հին հուշարձանների[4], Վանաշենում[5], Այրիվանքում[6] (Գեղարքունիքի մարզ)

---

[1] Նույնի, Լճաշենի 1984-1985թթ. պեղումները, ԼՀԳ, 1986, №10, էջ 90-96: Ոսկերչությունը Հին Հայաստանում, «Սովետական Հայաստան», ամսագիր, 1987, №3, էջ 34: Լճաշենի կիկլոպյան ամրոցի ժամանակագրության հարցի շուրջ, ԼՀԳ, 1994, №1, էջ 142-149: Փայտամշակումը Սևանի ավազանում միջին բրոնզի դարում, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1999, №2-3, էջ 232-240: Սևանի ավազանի բրոնզեդարյան ոսկերչության պատմությունից, ՊԲՀ, 2000, №3, էջ 234-240: Սևանի ավազանի ուշ բրոնզեդարյան մետաղագործական իրերի զարդանախշերը, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2006, №8, էջ 143-149: Հնագույն մետաղամշակությունը Սևանի ավազանում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2010, №12, էջ 128-138: Լճաշենի հնագույն մշակույթը,ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2011, №13, էջ 168-178:

[2] Նույնի, Սևանի ավազանի բրոնզեդարյան անասնապահությունը, ԼՀԳ, 1977, №3, էջ 83-90: Նոր տվյալներ Սևանի հնագիտական պեղումներից, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1983, №7, էջ 115-118: Նշվ. աշխ., Հին Հայաստանի փոխանակային առնչությունների փաստեր Սևանի ավազանի հնագիտական հուշարձաններում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1986, №1, էջ 112-120:

[3] Նույնի, Ժայռապատկերներ Գոշ գյուղի շրջակայքում, ԼՀԳ, 2008, №1, էջ 252-254: Նույն-ի,Նորահայտ ժայռապատկերներ Նեղուց գյուղի տարածքում, ԼՀԳ, 2006, №2, էջ 249-255:

[4] Նույնի, Հին հուշարձաններ Տաթև գյուղի մերձակայքում, ՊԲՀ, 2001, №3,էջ 259-264:

[5] Նույնի, Վանաշենի հին հուշարձանները.- Սովետական Հայաստան, ամսագիր, Ե., 1985, №9, էջ 30-31:

[6] Նույնի, Միջին բրոնզեդարյան նյութեր Այրիվանից, Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 2003, պրակ 1, էջ 304-309 (համահեղինակ Մ.Ս. Քեշիշյան):

կատարած հնագիտական հուշարձանների ուսումնասիրություններին: Դրանց լուսաբանման մասին տրվել են գիտական հրապարակումներ:

Լինելով գրականության մեծ սիրահար՝ Վ. Ավետյանը նաև ստեղծագործել է: Քչերին է հայտնի, որ գրական մամուլի մի շարք հրապարակումներում նա հանդես է եկել Վ. Կայծունց կեղծանվամբ: Այդ անունով է հրապարակվել Վ. Ավետյանի՝ «Ուշացած խոստովանություն» (Ե., 2003թ.) լիրիկական ստեղծագործությունների ժողովածուն և «Անմոռաց պահեր, հարազատ դեմքեր» հուշագրությունը (Ե., 2005թ.), մի շարք գրական հոդվածներ և բանաստեղծություններ:

Գիտնականի արխիվում պահվում են դեռևս չհրատարակված աշխատություններ, հուշեր, հոդվածներ ու ձեռագրեր, որոնք անկասկած մեծ արժեք և հետաքրքրություն են ներկայացնում: Հուսանք, որ դրանք, մեր կողմից վերջնական տեսքի բերվելով, իրենց արժանի տեղը կգտնեն: Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վ. Ավետյանի հուշերը, որոնք առնչվում են իր ժամանակի մեծերին և ուսուցիչներին, դեպքերին ու իրադարձություններին:

Իր կատարած պեղումների արդյունքում և անձնական միջոցներով ձեռք բերված նյութերով հասարակական կարգով ստեղծել է Լճաշենի, Շնողի, Երևանի Վահան Թոթովենցի անվան թիվ 57 դպրոցի հայրենագիտական թանգարանները, Սևանի երկրագիտական, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական և Գավառի պետական համալսարանների պատմագիտական և հայրենագիտական թանգարանները: Շնողի և Սևանի թանգարանները 1980թ. ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի կողմից արժանացել են «Ժողովրդական թանգարան» պատվավոր կոչմանը:

Պրոֆեսոր Վ. Ավետյանը մինչև իր կյանքի մայրամուտը դասավանդել է Գավառի պետական համալսարանում: Անգնահատելի է նրա վաստակը ԳՊՀ պատմագիտական և հայրենագիտական թանգարանի ստեղծման գործում (2011թ.): 2012թ.՝ իր մահից հետո, ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ, այն անվանակոչվել է հիմնադրի՝ Վարշամ Ավետյանի անունով: Բուհական թանգարանների մեջ ԳՊՀ թանգարանը կարող է համարվել օրինակելի, այն ծառայում է իր նպատակին՝ հնարավորինս պատշաճ ձևով կատարելով գիտատեղեկատվական և ուսումնադաստիարակչական կենտրոնի իր առաքելությունը:

2003թ. Վ. Ավետյանն արժանացել է «Պատվավոր շնողցի» կոչմանը, իսկ 2010թ. «Լոռվա Ձոր» հայրենակցական միության կողմից նրան շնորհվել է «Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսի հետնորդ» պատվավոր կոչումը: Չնայած իր առաջացած և պատկառելի տարիքին՝ շարունակում էր ակտիվ գործունեություն ծավալել նաև հասարակական և բնապահպանական բնագավառներում:

Միշտ ազնվական, հանդարտ կեցվածքով, հպարտ ու սիգաճեմ, անելիքի հստակ գիտակցությամբ և ասելիքով: Այդպես էլ լսարան էր մտնում: Սկզբունքային ու արդարամիտ, անզիջում, համարձակ ու խստաբարո էր, բայց զգայուն և բարի հոգով մի անհատ: Մարդկային այդ առաքինություններն էլ սովորեցնում էր իր սաներին, որոնցից շատերը գիտության և կառավարման համակարգի նշանավոր մարդիկ են դարձել: Շատերի համար եղել է խորհրդատու և ավագ ընկեր, նրանց համար ճանապարհ հարթել գործով և խորհրդով:

Կյանքի բովում և աշխատանքում է ձևավորվել գիտնական-մանկավարժ մարդու նրա տեսակը. միշտ անկեղծ և հարգալից լինելով դիմացինի և գործի նկատմամբ: Զարմանալի էին նրա զրույցները, որոնցով բացվում էր մի խորհրդավոր աշխարհ, հետաքրքիր՝ իր ապրած տարիների և օրերի, տեսած մարդկանց նման: Յուրահատուկ նահապետականություն ուներ, ուներ հավատ մարդու, լավի և ապագայի նկատմամբ: Հիշարժան է նրա իմաստուն մտքերից մեկը. «Եթե մենք չենք հիշում մեր ուսուցիչներին, ուրեմն լավ սան պատրաստել չենք կարող...»:

Վ. Ավետյանը իր խոսքում բազմիցս էր նշում, որ Սևանի ավազանն իր համար երկրորդ հայրենիքի քաղցրությունն ունի, քանի որ մանկավարժական առաջին մկրտությունը ստացել էր այնտեղ և Լճաշենի դպրոցում աշխատած տարիները համարում էր ամենաթանկն իր համար:

Երախտաշատ գիտնական-մանկավարժն ապրեց 85 երկրային տարի: Մինչև իր կյանքի մայրամուտ՝ մարդու և աշխատանքի հանդեպ պահելով պատասխանատվության և անմնացորդ նվիրումի զգացումը, որ միայն մեծերին է հատուկ:

ԳՊՀ դասախոսական անձնակազմն ու սաները միշտ առանձնահատուկ մեծարանքով են հիշում Վ. Ավետյանին՝ համալսարանի երախտավոր դասախոսների շարքերում:

Բանալի բառեր՝ *Վարշամ Ավետյան, հայ հնագիտություն, Լճաշեն, Շնող, Սևանի ավազան, Խաչատուր Աբովյան, Գավառի պետական համալսարան, թանգարան:*

VARSHAM AVETYAN. LIFE AND ACTIVITY
(On the 90-th Anniversary)

M. S. KESHISHYAN
Historian
Researcher at the Matenadaran after Mesrop Mashtots

Famous historian archeologist, Candidate of historical sciences, Professor of Gavar State University Varsham Avetyan turned 90 years old.

He was born in 1927, February 3, in the village Shnogh (RA, Lori region). In 1953-1958 he studied and graduated from the Armenian State Pedagogical Institute named after Khachatur Abovyan. V. Avetyan continued his studies in postgraduate studies, earning a scientific degree of Candidate of Historical Sciences. He has been a pupil of renowned archeologist, historian Morous Hasratyan.

In 1958-1974 as a researcher he participated in the excavations of Lchashen archeological expedition whose works were led by well-known archeologist Harutyun Mnatsakanyan. Later the expedition was headed by V. Avetyan (1975-1986). He has worked in Sevan region for 10 years, has been director of Lchashen secondary school, headed the Department of Popular Education in the Sevan region.

During six decades of scientific pedagogy he has left valuable archeological and patriotic heritage. He is the author of 9 monographs, more than 70 scientific and publicist articles.

In 2011 he founded a History Museum in Gavar State University, now called after V. Avetyan's name.

The famous scientist died on August 7, 2012. The GSU staff and students always remember Varsham Avetyan with love and admiration.

АВЕТЯН ВАРШАМ. ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ (К 90-летнему юбилею)

М. С. КЕШИШЯН

Историк, научный сотрудник Матенадарана им. Месропа Маштоца

Знаменитому историку, археологу, кандидату исторических наук, профессору Гаварского государственного университета Варшаму Аветяну исполнилось 90 лет.

Он родился 3-ого февраля, 1927 года, в селе Шнох (РА, Лорийский регион). В 1953-58гг. учился и окончил Ереванский государственный педагогический институт имени Хачатура Абовяна. Позже продолжает учебу в аспирантуре, получая ученую степень кандидата исторических наук. Варшам Аветян был учеником известного историка и археолога Моруса Асратяна.

В 1958-74гг. в качестве научного работника он участвовал в работах археологической экспедиции Лчашена, работы которой возглавлял известный археолог Арутюн Мнацаканян. В будущем экспедицию возглавил В. Аветян (1975-86гг.).

Около 10 лет, по назначению, работал в Севанском районе, был директором в Лчашенской средней школе, возглавлял Департамент народного образования в Севанском регионе. В течении шестидесятилетий научной и

педагогической деятельности он оставил ценное археологическое и историческое наследия. В. Аветян является автором 9 монографий, более 70 научных и публицистических статей.

В 2011г. он основал исторический музей в Гаварском Государственном Университете, который теперь носит имя В. Аветяна.

Известный ученый скончался 7 августа 2012 года. Сотрудники и студенты ГГУ всегда с любовью и восхищением вспоминают В. Аветяна в числе почетных и заслуженных профессоров Университета.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ

Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտաշխատող, պատմաբան

Բնակլիմայական նպաստավոր պայմանների և աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ Սևանի ավազանի տարածքը հնագույն ժամանակներից եղել է խիտ բնակեցված և հարուստ պատմական հուշարձաններով: Պատմահնագիտական առումով առանձնահատուկ և բացառիկ կարևորության հնագիտական պեղածո նյութի հարուստ շտեմարան լինելու հանգամանքը փաստում է հազարամյակների խորքից եկող հզոր և ինքնատիպ մշակույթի մասին: Ավազանի տարածքն ընդգրկող հուշարձանները (բերդ- ամրոցներ, դամբարանադաշտեր ու բնակատեղիներ, վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր և այլն) գոյատևել են հազարամյակներով: Տարբեր ժամանակաշրջաններում դրանցով հետաքրքրվել են հայ և օտար ուսումնասիրողները, գիտնականները և ճանապարհորդները՝ թողնելով բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ և գիտական աշխատություններ: Ուշադրությունը տարածաշրջանի նկատմամբ ակնհայտորեն մեծանում է հատկապես XIX դարի երկրորդ կեսին:

Գիտական առաջին հետազոտողներից է Էջմիածնի միաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, ով տասնյակ տարիներ զբաղվել է Հայաստանի, հատկապես Սևանի ավազանի բերդերի, դրանց շրջակայքի սեպագրերի ուսումնասիրությամբ: Այս բնագավառում մեծ է նրա կատարած աշխատանքը: 1862թ. պաշտոնավարելով Սևանի ավազանի հոգևոր թեմում և շրջագայելով Գեղարքունիքով՝ Մարտունու Քոլաղռան (Քեօլանի-Ղռան, Կելանի, Ալիչալու,